

ՊԵՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ
ՏԻՄՈՒՐԻԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

№ 22—23

№ 22—23

Պ. ՅՈՒ. ՇՄԻԴՏ

ԿՅԱՆՔԻ ՔԻՄԻԱՆ

57
Հ-72

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՎՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

5 JUL 2013

12582

20 JUL 20

ԳԵՂԱՔԱԾԻ ԳՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
№ 22—23

№ 22—23

57

7-72

ԱՎ

Գ. ՅՈՒ. Շ Մ Ի Ց

ԿՅԱՆՔԻ ՔԻՄԻԱՆ

1048
39-232096

Ազատ գոյացքություն



Պատ. Խմբագիր՝ Ն. Խանջյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Պետրոսյան
Տեխ. խմբագիր՝ Գ. Զհոյան
Ռեքագրիչ՝ Կար. Հակոբյան

I

«Ամեն ինչ հոսում ե» — պնդում ելին հին Հունաստանի փիլիսոփաները, — ամեն ինչ հավիտենապես փոխում ե իր ձեր, ինչպես լեռներից հոսող գետակը... Իսկ յերբեմնի պատկանիր, մեծ մտածող Մարկոս Ավրելիոսն այդ միտքն այսպես եր ձեւակերպում։ «Այն ամենը, վոր զու այս բովելիս տեսնում ես, ամենազոր բնությունն անմիջապես փոխելու յի և նրանից ստեղծելու յի նոր մարմիններ և սրանց նյութից՝ դարձյալ ուրիշ մարմիններ, և այսպիս աշխարհն անընդհատ նորոգվում ե»... Ժամանակի հանճարեղ մտածողն ու շրջահայցն այդ խոսքերի մեջ դրել և բոլոր այն եյական յեղափակումները, վոր ժամանակակից բնագիտությունն և անում բնության մեջ տեղի ունեցող նյութի շրջանառության մասին։ Այդ հատվածի մեջ կարծես նյութի հավիտենականության խոստվանությունը կա—«այն նյութը», վոր մեր աչքի առաջ կա և տեսնում ենք, նա պիտի փոխվի և նրանից պիտի ստեղծվի «նորը», այսինքն՝ նյութը չի վոչնչանում և վոչ ել նորից ստեղծվում ե անհայտ տեղից։

Մարդկային միտքը միշտ ձգտել ե և ձգտում ե ճանաչելու շրջապատող բնությունը և այդ պատճառով ուսումնասիրել և վորոնել և նրա մեջ մշտապես տեղի ունեցող փոփոխությունների պատճառները։ Հենց սկզբից ել կարիք և զգացվել այդ փոփոխությունները բաժանել յերեք կատեգորիաների։ Այն փոփոխությունները, վորոնց ընթացքում մարմինները չեն քայլայվում իրենց բաղադրիչ տարրերի—առաջ են բերում ֆիզիկական յերեվություններ։ Իսկ այն փոփոխությունները, վորոնք մարմինների ներքին բաղադրությունն ավելացնեքի լին յենթարկում—առաջանցում են ֆիսիական յերեվություններ, և, վերջապես, կյանքի հետ կապ ունեցողները—կենսաբանական յերեվություններ։

Իհարկե գիտության զարգացումը չի ընթացել մի սքեմատիկ ուրիշագծով, գիտությունը ծնունդ և առել զործնական կյանքի արմատներից։ Որացուցային գիտելիքների պահանջը դրդել ե

Քլավիս № 8636, հրատ. № 3069, պատվեր № 1159, տիրագ. 3000 հանձնված և արտադրության 17 հունիսի 1934 թ., ստորագրված և տպագրության համար 30 ոդուստուի 1934 թ.

մարդկանց խորանալ աստղաբաշխության մեջ, քիմիան ստեղծվել է ոգտակար հանքերը ճանաչելու, ներկեր և դեղեր պատրաստելու անընդհանուր յաւագությունից, իսկ կենսաբանությունն իր ծնունդն առնել ե բժշկական պահանջներից և կամ շրջապատող կենդանական բուսական աշխարհների մասին գործնական դիտելիքներ ձևով բերելու անընդհանուր յաւագությունից:

Բիմբան և կենաւրանությունը՝ այս յերկու դիրքը սլամուր
իրենց ծննդյան հենց առաջին որից իրար բաղխվեցին: Բժշկական
պահանջներն առաջ բերին նյութերի բաղադրությունը լավ ճա-
նաչելու անհրաժեշտությունը, իսկ բուժական նպատակներն ոգ-
տակար աըդյունքի հասցնելու համար՝ մարդու որդանիզմը
ճանաչելու անհրաժեշտությունը:

Վորքան լնդարձակվեց քիմիայի և բնախոսակած գրառությունների գործունելության ասպարեզը, այնքան նրանք ավելի սերտ կապերով կապվեցին իրար հետ. ամենից առաջ պարզվեց, վոր կենդանիների և մարդու մարմնի բաղադրիչ տարրերի մեջ կան բազմաթիվ հանքային նյութեր, վորոնք վոչնչով չեն տարբերվում բնության մեջ ինդաններից: Հետո պարզվեց և այն, վոր առհասարակ բոլոր կենդանի որգանիզմները կազմված են այն պիսի քիմիական տարրերից, ինչպիսի տարրեր մենք գտնում ենք անկենդան աշխարհում: Բացի այդ՝ պարզվեց, վոր այդ տարրերի քանակը սահմանափակ է—ածխածին, թթվածին, ազոտ, ջրածին, լուսածին, ծծումբ և մի քանի մետաղներ աղացին վիճակում,—առա անհամար որգանական միացությունների այն հիմնական նյութերը, վորոնցից կազմված են՝ արյունը, ուղեղը, մկանները, բույսերի տերևները, արմատը, պտուղները և այլն:

Թիմիկոսների և կենսաբանների միահամուռ հետազոտությունների շնորհիվ, բնախոսությունն իր զարգացման բարձրության աստիճանին հասավ, և հաջողվեց հաստատել վոր որդանիքների մեջ կատարիլող կենսական ամենակարևոր պրոցեսները չիմնականում քիմիական պրոցեսներ են: Բուլմերի մեջ տեղի ունեցող գաղերի փոխանակությունը, թթվածնի կանումը, ազոտի

յուրացումը, կենդանիների որգանիզմի մեջ՝ թթվեցման պրոցես-
ները, աղիքների մեջ՝ կերակրի ձևափոխման բարդ գործողու-
թյունները — թեև լրիվ լուսաբանված չեն, բայց երեսց
ելությամբ քիմիական յերևություններ են: Նրանցից շատերը քիմիա-
կան աշխատանոցներում, սրվակների և փորձանակների մեջ
նույնպիսի հաջողությամբ են կատարվում, ինչպիսի հաջողու-
թյամբ վոր կատարվում են կենդանի օրգանիզմների մեջ (որի-
նակ՝ արհեստական մարսողություն):

Յերկար ժամանակ այն կարծիքին ելին, թե կենդանի որպահնիզմի և քիմիական աշխատանոցում կատարված նույնանման քիմիական պրոցեսների մեջ սկզբունքային տարրերությունն կահոնչպես կարելի յել յերկակայել վոր առանց կենսական ուժերի մասնակցության, արհեստական միջոցներով, հնարավոր լինի այն բոլոր նյութերն ստեղծել ինչ վոր կենդանի որգանիզմի մեջ կան: Այդ մի անիրականանալի գնորդ եւ:

Սակայն քիմիան դեռ իր զարգացման ամենայերիտասարդ հասակում կարողացավ այդ նախապաշարմունքի հիմքերը քանչել: Դեռ 1828 թվին գերմանացի Քիմիկոս Վ. Յոլերը պատրաստեց մի սինթետիկ սյութ, վոր նորմալ պայմաններում ստացվում է միայն կենդանիների որգանիզմի մեջ, այդ նյութը կոչվում է միզանիոր: Կաթնասունների մեզի գլխավոր բաղադրիչ մասն ե այդ:

Ճիշտ ե, որգանական միացությունների մեջ միզանյութն իր բաղադրությամբ ամենապարզերից մեկն ե, բայց Վլուհրի հայտնագործությունը, համենայն դեպս, սկզբունքային խորը նշանակություն ունեցավ: Նրա գյուտավ սարգվեց, վոր որգանական նյութերն ել միևնույն ատոմների և մոլեկուլների զանազան կոմբինացիաների արդյունք են, որգանական միջավայրի պայմաններում, ինչ վոր անորդանականները, և նրանց մեջ յեղած տարրերությունը միմիայն մասնիկների չափաղանց բարդ կառուցվածքի և փոխազարձ բարդ կոմբինացիաների մեջ է:

Այդ որպանից, որգանական միացություններ պատրաստեալու գործում, սինթետիկ քիմիայի զարգացումն արտակարգ առաջադիմություն ցույց տվեց: Կարելի յէ համարձակ ասել, վորայժմ որգանական նյութերի մեջ չկան այնպիսի քիմիական նմբավորություններ, վոր քիմիայի ներկայացուցիչները չկարողանան պատրաստել՝ լելակետ ունենալով անորգանական պարզ տարրեր:

Վերջին տասնամյակում, յերբ կյանքի և կենսական պրո-

ցեսների մասին մեր ճանաչողությունն զգալի չափով խորացակ, քիմիան և կենսաբանությունն ավելի ևս խոր կերպով ամրացան: Յերբ հետազոտում ենք բջիջի ներքին կյանքը, նրա նյութի՝ պրոտոպլազմայի նուրբ հորինվածքը, այնտեղ՝ մանրադիտակային այդ փոքրիկ աշխատանոցում ել մենք տեսնում ենք, վոր կինսական հիմնական յերեսութները կատարվում են ֆիզիկո-քիմիական ամենաբարդ պրոցեսների ճանապարհով:

«Բնախոսական» քիմիան, գիտության այլ աշխարհում՝ կապես զբաղվում ե քիմիական այնպիսի յերկույթների ուսումնասիրությամբ, վորոնք որպանիզմների մեջ են իրենց ծագումնառնում, վերջին ժամանակներս քանի գնումն ավելի կատարելագործվում և փոխվում ե «կինսաքիմիայի» կամ «բիոքիմիայի», վոր իսկական «կյանքի քիմիան» ե:

Այստեղ ինձ զբաղեցնողը ավյալ գիտության հիմքերը բաշտարելու խնդիրը չե, կորքան ել նա հետաքրքրական ե, վոռովինեան պահ ծանօթանալու համար պահանջվում է քիմիական հասնագիտության լուրջ պատրաստություն։ Իմ նպատակն ալելի համեստ ե։ Յես պիտի փորձեմ ընդհանուր գծերով գաղափար տալ բիոքիմիայի այն յերկու բնագավառների մասին, վորտեղ նա վերջին ժամանակներս մեծ նվաճություն ե ունեցել։ Այդ բնագավառներից մեկը՝ բույսերի և կենդանիների մեջ նյութերի փոխանակության ամենաինտիմ պրոցեսները պարզաբանելու խնդիրն ե. իսկ մյուսը՝ ե՛լ ավելի զարմանալի հայտնագործություններով հարուստ բնագավառը, վորտեղ յերեսում ե քիմիաթյուններով հարուստ բնագավառը, վորտեղ յերեսում ե քիմիա- յի ազդեցությունը կենսական պրոցեսների վրա՝ մի քանի որ գանների արտադրած զանազան նյութերի կողմից, վորոնք ան- միջապես մտնում են արյան մեջ։ Այդ՝ այսպես կոչված՝ ներբե- ման քիման եւ

III

Վաղուց արդեն հայտնի յե, վոր կյանքի գլխավոր աղբյուրն
արեի լույսն եւ Յերեկվա լուսատուն յերկրագնդի վրա թափում
և ամենաչնչին մասն այն հսկայական եներգիայի, վոր առաջա-
նում և նրա արտաքին մակերեսի, նրա ֆոտոսվերայի վրա կա-
տարվող քիմիական հոյակապ պրոցեսների շնորհիվ: Սակայն
դայլափ չնշին եներգիան եւ բավական և մեր մոլորակը կեն-
դանացնելու համար:

Արևի ենսկրպիան բույսերը բռնում են և վերամշակում: Նրանց կանաչագույն աշխատանոցներում — տերևներում, արևի լույսի ներգործությամբ կատարվում է ջրի, մթնոլորտային թթվածնի, ածխաթթու զաղի և արմատների միջոցով հողից վերցրած նյութերի և ազոտային միացությունների խորհրդավոր պրոցեսը: Բույսերի կենդանի նյութի պրոտոպլազմայի մեջ կատարվում են ածխաջրերի (շաքարի, սալայի, ցելուլոզի) սինթեզ և սպիտակուցային միացություններ: Յեվ բույսերի ստեղծագործական այս գործունելությունը յերկրագնդի ամբողջ կյանքի հիմնաքարն է կազմում:

Կանաչ նյութից (քլորոֆիլ) զուրկ բույսերն ու կենդանիները միայն քանդում և քայքայում են կանաչ տերեները ունեցող բույսերի պատրաստած բարդ միացությունները, բաժանելով նրանց ավելի պարզ բաղադրիչների։ Առանց բացառության կարելի յե ասել վոր բոլոր կենդանիները, վորոնց թվում նաև մենք՝ բույսերի պարագիտներն ենք։ Նույնիսկ այն կենդանիները՝ վորոնք բուսակեր չեն (գիշատիչները), նրանք ել անուղղակի կերպով բույսերի պարագիտներ են, վորովհետև նրանք կերակրավում են այնպիսի կենդանիների հաշվին, վորոնք իրենց հերթին վոչնչացնում են բույսերը։

Կանաչ բույսերի մեջ կատարվող զարմանալի սինթեզների աղբյուրներն ու արդյունքներն արգեն վաղուց գիտության սեփականություն են դարձել արգեն հանրածանոթ և տերևների կանաչագույն նյութը—լորոֆիլը, զոր մանրադիտակով զննելիս քչիչի պրոտապլազմայի մեջ յերևում և հատիկների ձևով։ Դեռ յերեսուն տարի առաջ գտել ենին, զոր քլորոֆիլն իր հատկանիշներով ու քիմիական հորինվածքով շատ նման և մեր արայն կարմիր գնդիկները ներկող նյութին—հեմոգլոբին։ Սակայն իրենց կատարած գործով նրանք բոլորովին տարբեր են։ Մինչդեռ հեմոգլոբինն ընդունակ և միայն ժամանակավորապես թթվածնի հետ միանալու, զոր տանում, բաժանում և մարմնի հյուսվածքներին, այդ տեսակիտից քլորոֆիլի գերն ավելի բարդ է։ Նա ընդունակ և արեի լույսի մասնակցությամբ ածխաթթու գաղը տարրալուծելու թթվածնի և ածխածնի, ապա ջրից փոխ առած ջրածնի հետ միասին ածխաջրեր պատրաստելու։ Ամենից առաջ նա պատրաստում և շաքար և ոսլա, փորոնք բույսի կյանքի համար շատ անհրաժեշտ նյութեր են, իսկ մեզ համար՝ առա-

Այս լու համարնեւ եւ կ տառորական դաշտագույն վայ-
կել ես կարեոր նյութեր։ Այս սինթեզի արդյունքները լինում
են ածխաջրերը և մեծ քանակությամբ արտաշնչած թթվածինը։
Այդ և պատճառը, վոր մենք անտառում մեծ հաճույք ենք զգում
շնչելիս։ Այստեղ ողբ հարուստ եւ թթվածնով, յերեմն ել օգո-
շնչելիս։

Այս բոլորը վաղուց ամենքին հայտնի է և տարբական դասպարզերի մեջ մտած. բայց ածխաթթու գաղից ածխաջրեր ստացվելու կերպը մինչև վերջին ժամանակներս ել լավ պարզաբանված չեր:


Այսպիսի ածխաջլեր, ինչպես շաքարը, ուլտն և ցեղուղովն են, թեև կազմված են միայն ածխածնից, թթվածնից և ջրածնից բայց բավականին բարդ հորինվածքով մոլեկուլ ունեն, համեմայն գեպս ափելի բարդ քան ածխաթթու զազն ու ջուրը: Զենայն գեպս ափելի բարդ քան ածխաթթու զազն ու ջուրը: Զենայն գեպս ափելի բարդ քան ածխաթթու զազն ու ջուրը:

Այլ այդպիսի պրոցեսների համեմատություններից պարզ վել և, վոր ածխաջրերի մոլեկուլը միանգամից չի կազմակերպվում, այլ մի քանի աստիճաններով և անցնում: Ամենից առաջ այդ յերեք տեսակի աղյուսները խառնվելով կազմում են միջնաայդ յերեք, ուրիշ կերպ արտահայտած՝ աղյուսակույտեր, և կյալ նյութեր, ուրիշ կերպ արտահայտած՝ աղյուսակույտեր, և հետո այդ կույտերից ստեղծվում են բարդ շինություն:

Սբանից 25 տարի առաջ գերմանացի քլիմիոս Իայզը որ
հիպոթեսիկ յենթագրություն արեց, հիմնվելով Քլորոֆիլի և
արյուն ներկող նյութի՝ հեմոգլոբինի նմանության վրա, թե ամե-
նայն հավանականությամբ Քլորոֆիլը նախ և առաջ ածխաթթու-
գաղը վերլուծում և ածխածնի ոքսիգեն¹⁾ ու թթվածնի և ապա,
ջրի ջրածինը, նույնպես Քլորոֆիլը ազդեցությամբ, բաժանվու-
ե թթվածնեց և հետո միանալով ածխածնի ոքսիգեն հետ՝ տալիս
ե ֆորմալինիդ, իսկ վերջինիս մասնիկը վեցապատկվելով՝ կազ-
մում և շաքար²⁾:

1) Ածխածնի՝ ոքսիդ կամ յգար—շմոլ(։ Մի վանդպափոր զազ ե, զոր ուժեղ կերպով միանում ե արյան հեմոդլաբինին և նրան զրկում ե հյուսվածք-ներին թշվածին մատակարաբեկու ընդունակությունից։

2) $\text{Fe}_3\text{Mn}_2\text{Li}_2\text{O}$ սահնելին ծանթը լովթեցնուածի առարկ գրաւե գումարի մասին Փոքրութեւ $\text{H}_2\text{CO} = \text{CO}$ (ածխածնի ոքսիդ) + H_2 :



Յեթե մոտիկից ծանոթանանք փորձալլեհիդին՝ այդ հիպո-
թեզը մեղ զարմանալի կթվա ԶԵ վոր ացն այն զազն ե, վորից
պատրաստում են ֆորմալին կոչված ախտահանիչ նյութը: Նրա
ջրային լուծույթն ամենքին հայտնի յեւ Ով պատեհությունն ե
ունեցել նրան ծանոթանալու, յերկար ժամանակ չի սուանա
նրա սուր հոտը, վոր մեր հոտոտելիքի լորձաթաղանթը զրգում ե,
չնչառությունը կտրում, աչքերն արտասուզով լցնում և տմինա-
խիստ հարբուխ ե առաջցնում: Կարելի՞ յեւ յերեակայել, վոր
այդ գաղը բռւյսերի կանաչ տերեկների մեջ վերածակվում ե ու
գառնում շաքար և ուլա: Այդ նյութը թույն ե, չնչառության
համար՝ վտանգավոր, նա սպանում ե ասեն կենզանի եյակի, դրա
համար ել նա գործածվում ե փորպես ախտահանիչ:

Այսուամենայսիվ վերջին ժամանակներս մի շարք հետազոտություններ արտահայտվեցին հոգուտ ֆորմալիգնիդի, վորպես մի սիջանկյալ նյութի, վորը գոյանում և բույսերի մեջ ածխաթթու գաղից ածխաջրեր պատրաստելու ժամանակի. Խոկապես, շվեցարացի քիմիկոս Վելչտեսերին հաջողվեց ֆորմալիգնիդը փոխել շաքարով՝ մագնի մետաղի աղղեցությամբ. Նրա ասելով այդ մետաղը միշտ կա քրորոֆիլի բաղադրության մեջ. Հետո պրոֆ. Ստոկալը փորձերով համոզեց, վոր արեկի լույսի ուժարամանիշակագույն ճառագայթների աղղեցությամբ ջրածինը միանում և ածխաթթու գաղի հետ և ստացվում և ֆորմալիգնիդ, իսկ կալիումի առկայությունը նրան փոխում և շաքարի թվում և, թե քիմիական աշխատանոցում սրվակների և փորձանակների մեջ հաջողվեց կատարել այն պրոցեսը վոր կատարվում և կանաչ բույսերի տերևների մեջ:

Այս յեղբակացությունն ավելի ևս ճշմարիտ համարվեց, յերբ դ-ը Գաֆեն փորմալգեհիդի վնասակարության առկայությունը ևս ջրեց Նրան հաջողվեց ցույց տաջ վոր Փորմալգեհիդը գաղային վիճակում վոչ միայն վնասակար չե բույսերի համար, այլև մինչև անգամ կարող է շատ զեղքում նրանց վարպես սննդի աղբյուր ծառայի Ֆորմալգեհիդով հարուստ մթնոլորտում բուսացրած կանաչ բույսերը նրանից ոդքափում են ածխաթթու գազի փոխարեն և ածխաջրեր են պատրաստում վոչ թե անմիջապես առաջին աղբյուրից, այլ միջանկալ միացությունից:

Այսպես ուրիշն, ստեղծվեց բույսերի մեջ ածխաջրեր գոյաց-
նելու ֆորմալինիդային մի քերփա, վոր իր թիկունքում ունի
բազմաթիվ համոզեցուցիչ փաստեր։ Սակայն զիտական քննադա-

տության կողմից նրա դեմ յեղան հակածառություններ և բավականին ծանրակշիռ առարկություններ: Թվական հաշիվներով ապացուցեցին, վոր լույսի ազգեցությամբ ածխաթթու գաղը փորմալգեհիդի և փորմալգեհիդն ածխաջրերի փոխելու համար եներգիայի չափազանց մեծ ծախս և պահանջվում, և հենց այդ պատճառով ել դժվար համատալի յե, վոր բնությունն այդ վորապտույտ և դժվարին ճանապարհն ընարեր, թեև Գրաֆեի լորապտույտ և դժվարին ճանապարհն ընարեր, թեև Գրաֆեի փորձերն այդպիսի ձևափոխության կատարյալ հնարավորության ապացույցը տալիս են: Արհեստական միջոցներով բույսի մեջ փորմալգեհիդից ածխաջրեր ստանալու հնարավորությունը գեռ և չի կարող մեղ համար վորպես ապացույց ծառայել, վոր, նորմալ պայմաններում բույսերի մեջ կատարվող պրոխեն ել այդ ուղիղով և ընթանում:

Վերջին ժամանակներու բույսերի մեջ ածխաջրեր գոյանալու վերաբերյալ մեկ ուրիշ թեորիա լույս ընկավ, վոր մյուսների համեմատությամբ ավելի հավանականություն ստացավ: Հստակ այդ թեորիայի, ածխաջրերի գոյացումը մեծ կախում ունի մըջաբարբից¹⁾ նրա առկայությունը բույսերի ընթաների մեջ կարելի յե հաստատել:

Քիմիական պրոցեսների այդպիսի ընթացք բույսերի մեջ վաղուց յենթադրել եր եռելմայերը, բայց դժվար կարելի յեր վաղուց յենթադրել եր եռելմայերը, բայց դժվար կարելի յերկակայել, վոր ածխաթթու գաղից հնարավոր և մըջնաթթու ստանալ վորովհետև լաբորատորային պայմաններում չափազանց մեծ եներգիայի վատնում եր պահանջում այդ, որինակ՝ զուտ կալիում մետաղի մասնակցություն կամ ամենառութեղ ելեկտրամեքնաների գործողություն:

Սակայն մոտ ժամանակներու լույս և տեսել Բրեդիգի և Կարտերի մի աշխատությունը, վորտեղ ապացուցվում ե, վոր ածխաթթվական աղերից միանգամայն հնարավոր և մըջնաթթու ստանալ վորեւ կատալիգատորի առկայությամբ, որինակ՝ պլատինի խմբին պատկանող մետաղներից մեկի և վորու ճնշման յենթարկած թթվածնի ներգործությամբ:

Իհարկե, պլատինյան մետաղների առկայություն յենթարկել բույսերի տերեների մեջ—դժվար ե: Բայց որգանական աշշիարհում կատալիգատորների գերը կատարում են խմբում առաջացնող տարրեր կամ ֆերմենտները կոչված նուռթերը:

1) Մըջնաթթվի փորմուլը՝ H_2CO_2 , այս թթուն գտնվում և մըջյունների և ուրիշ խայթող միջատների թույսի մեջ:

Ֆերմենտները շատ բարդ միացություններ են, վորոնց քիմիական բաղադրությունը դեռ պարզված չե, բայց նրանք շատ լայն չափերով են տարածված, խոշոր և առաջնակարգ նշանակություն ունեն բիոքիմիական ուելցիաների մեջ: Մի ամբողջ շաբաթ քիմիական փոփոխումներ, վորոնք տեղի ունեն կենացանական և բուսական որգանիզմների մեջ, կապված են ֆերմենտների մասնակցության հետ: Այդ նշանագոր միացությունների ուշադրության արժանի հանգամանքն այն ե, վոր նրանք գործում են չափազանց յեռանդով և իրենց բաղադրությունը չեն փոխում: Բայց այդ ֆերմենտի մի ամենաչնչին քանակը բավական և նյութի մի խոշոր զանգված համապատասխան փոփոխության յենթարկելու համար:

Այսպես ուրեմն, կանաչ բույսերի տերենների մեջ կատարվող համապրական պրոցեսների մասին ներկայումս ամենահավանական հիպոթեզն այս ե, ամենայն հավանականությամբ քլորոֆիլի մեջ գտնվող ֆերմենտների աղղեցությունն ե, վոր առաջ և բերում այդ փոփոխությունները: Իսկ գրա համար ապացույցներ կան, վոր ածխաթթուն փոխում և մըջնաթթվի, իսկ վերջինս ել ածխաջրերի: Պետք է կարծեց վոր այս ուելցիայի համար անհրաժեշտ ջրածինն ստացվում և ջրի տարրալուծման հանապահուով, արևի լույսի ճառագայթների անմիջական ներգործությամբ: Բերթուն, կոն և ուրիշները փորձերով ապացույցել են, վոր ուլտրա-մանիշակագույն ճառագայթների ներգործությամբ ջրի մոլեկուլը քայլայվում և տալիս ե մի պայթուցիկ գաղ, վորը թթվածնի և ջրածնի խառնուրդ ե:

Իհարկե, սրանով չի կարելի խնդիրը վերջնականապես լուծված համարել բայց բնության խնամքով թագցրած այդ գաղտնիքի քողի մի ծայրն արդեն քիմիան բացել ե, և հույս ունենք, վոր մետիկ ապացում բոլորովին պարզաբանված պիտի տեսնենք ածխածնիկ ջրի բարդ միացությունների—ածխաթթերի փոխվելու գաղտնիքը:

Անմիջիթար վիճակի մեջ և գտնվում բույսերի կյանքի մեջ ամենապլիավոր գերն իրենց վրա կրող՝ սպիտակուցային նյութերի բացատրության խնդիրը—սպիտակուցներ, վորոնցից կազմված և բջիջի պլուտուլազման: Սպիտակուցների բաղադրության մեջ մասնում և աղոտը, վոր բույսի արմատները վերցնում են հողից՝ աղոտաթթունների և ամոնիակային աղերի վիճակում: Թե վարոնք են այդ միացությունների փոփոխման հաջորդական պրոցեսները և ինչպես են ամենապարզ մասնիկներից

ստացվում սպիտակուցային ամենաբարդ ու խառնիձաղանձ մասնիկներ, սրանք նույնպես դժվար լուծելի խնդիրներ են: Բայց դրա բանալին ել գտնված ե և, ըստ յերկույթին, այստեղ ել գաղտնիքը գրամմաների մասնակության մեջ պետք ե փնտրել:

III

Մենք արգեն իմացանք, վոր կյանքի և կենդան նյութի ստեղծողները կանաչ բույսերն են: Սուսնկերն ու կենդանիներն իրենց գոյության հիմքն ընդունել են այն բարդ քիմիական շնորհերը քանդելու պարուականությունը, վորոնք այնքան խառնաշփոթ սինթեզի ճանապարհով կառուցվել են բույսերի տերեւներում: Կենդանիների միջոցով բարդ ածխաջրերն ու ճարպերը փոխվում են ածխաթթու գազի և ջրի, այսինքն այրվում են որգանիզմի ներսում: Բույսերի սպիտակուցներն այնտեղ «ասիմիլյացիայի» յեն յենթարկվում, այսինքն կենդանիների միմն ու արյունն են դառնում, կամ ուրիշ կերպ արտահայտած՝ կերպարանափոխվելով ուրիշ սպիտակուցներ են դառնում:

Այս փոփոխումները նույնպես ընդհանուր գծերով վաղուց հայտնի յեն և տարրական գասագրքերի սևիականությունն են գարձել: Բայց սրանց մեխանիզմի, մանավանդ սպիտակուցների գերլուծման սանրամասությունները պարզվեցին միայն վերջերս, գերմանացի տղանդավոր բնախոս Արգերհալդենի ջանքերով: Սպիտակուցների վերլուծման ճանապարհն արգեն հարթված եր չոփմեյտերի, կոսսելի և եմիլ Ֆիշերի աշխատանքներում, վորոնց մեջ նրանք բացատրել են այդ բարդ որգանական միացությունների բաղադրությունները:

Կենդանի նյութի գլխավոր հիմքը կազմող սպիտակուցները շատ բարդ և խառն մոլեկուլներ ունեն: Յեթե մենք ճարտարաշատ բարդ կամ համեմատությունն անելու լինենք, սպիտակուցի մոլեկուլը պիտի համեմատենք մի շատ բարդ շինության հետ, վոր շինված և մեծ քանակությամբ և բազմազան միացություններով իրար հետ կապված աղյուսներից: Եմիլ Ֆիշերի աշխատությունները ցույց են տալիս, վոր այդ աղյուսները կարելի յէ արհետական միջոցներով իրարից անջատել: Այժմ առանց փոխարեւական գարձվածքների կարող ենք ասել, վոր սպիտակուցի մոլեկուլը կառուցված և մի շարք պարզագրիչ մասնիկներից,

վորոնք կոչվում են ամինոթթեւներ: Նրանց թիմը սպիտակուցների մեջ տարբեր ել յերկույթերերից մինչև տասը և ավելի: Նրանց մինչ այժմ մեզ հայտնի յեն 20-ը:

Ամենութթուներն այնքան պարզ միացություններ են, վոր առանց դժվարության, արհետական կերպով հաջողվում են նրանց շատ-շատերը պատրաստելու Մի բայլ ևս գեպի առաջ գնալով ամինոթթուներից միացություններ կազմելով հաջողվել են ամենապարզ սպիտակուցն ստանալ... Կարծես թե հաղթանակը կատարյալ և, սպիտակուցների սինթեզի պրոցեսն արդեն վերջնականացես լուծված պետք են համարել...

Դիտական խոշոր խնդիրները լուծելիս, ինչպես միշտ, այս տեղ ել հանդիպեցին մի շարք դժվարությունների: Բանից դուրս յեկավ, վոր գորքան բարդ կառուցվածք ունի սպիտակուցը, այնքան դժվար և ամինոթթուների միացություններով այն ստանալը: Զափազանց բարդ և բազմաթիվ գործողություններ են պահանջում նրա սինթեզը: Շատերը յերազել են արհետական միջոցներով սպիտակուցային ուտելիքները պատրաստելու մասին, բայց գործնականում չափազանց հիմաթափվել են: Թեև նրանց հաջողվել և ամինոթթուններից սննդարար բարդ սպիտակուցները պատրաստել սակայն այս սպիտակուցներն այսպիսի ծանր դժվարությունների հետ են կապված և այնքան թանգ են նստում բնական սպիտակուցների նորմալ արժեքի հետ համեմատած, վոր ստիպված են յեղել առայժմ հրաժարվել այդ մտքից:

Յերեակալությամբ հարուստ վիպագիրների ուտոպիստական բազմաթիվ աշխատություններուու նոր մարդկությունը կերպվում է հարերի ձեռվ արեն արհետականորեն խտացրած սպիտակուցներով: Յերեկի այդ հարերին մենք գեռ յերկար պիտի սպասենք:

Սակայն սպիտակուցների բնագավառում նոր գյուտերի գործնական հետեւաքնները վորքան ել վոր չնչին են, գոնե տեսականում նրանք հսկայական քայլեր են արել: Սպիտակուցների բաղադրության վերաբերյալ հայտնագործությունները մեր մեջ ականա այն միտքն են հղացնում, վոր սպիտակուցներով սնվող որգանիզմների մեջ ել նրանք տարրալուծվում են ամինոթթունների և ապա՝ իրենց բաղադրիչ մասերին:

Կերակուրն ընկնելով մի կենդանու կամ մարդու մարսողության խողովակի մեջ, իսկապես նա այնտեղ յենթարկվում է մշակման և գերամշակման: Մարսողության որգանների ամբողջ

մթերանոցն այդ նպատակին և ծառայում։ Նրանցից մի քանիսը կերակուրը սանրացնում են, տրորում և սեխանիկորեն խառնում։ ուրիշները քիմիապես մշտկոլով՝ լուծելի յեն գարձնում և աղիք-ներից դեպի բջները թափանցելու գործը հեշտացնում են։ Թքի մեջ գտնված պտիալինը ջրի մեջ անլուծելի ուլան փոխում է լուծելի շաքարի։ Այսպի արտադրած լիզին ճարպերը սապնացնում են և նրանց փոխում և յուրացման համար նուրբ եմ։ Այս վերջաշ-պես ստամոքսային հյութը, չենթաստամոքսային գեղձելուն ու աղիքները զանազան ֆերմետաներով վերամակելով սպիտակու-ցալին նյութերը՝ նրանց գարձնում են աղիքների միջով ներս ծծելու և կենդանու սեփական սպիտակուցին վերածվելու ընդու-նակը Թի ինչպես և այդ կատարվում և վեր աստիճան են նրանք տարրալուծում, այդ մեզ համար գեռ անհայտ յե մնացել։

Ե. Ֆիշուի աշխատություններից հետո կարելի է ստածել գոր ամիսնթոթունները հենց սպիտակուցների քայլաման արգասիք-ներն են։ Արհեստական ճանապարհով, ծծորաթթվի և աղաթթվի ներգործությամբ, յերբ սպիտակուցները տաքացնում ենք, նրանք հեշտությամբ բաժանվում են ամիսնթթունների։

Սակայն սարսողության խողովակը հերձելիս կերակրի գանգ-վածի մեջ ամիսնթթունների առկայությունը հաստատել չե հա-ջողվել և վոչ ել արյան կամ մարմնի այլ հեղուկ սասերի մեջ։ Ակներե ե, վոր սպիտակուցային միացությունների ամիսնթթու-ներ գառնալու պրոցեսը վոչ թի մարսողության խողովակի մեջ և կատարվում, այլ աղիքի պատերի մեջ՝ յուրացման ժոմինտին։ Սպիտակուցների քայլայումից անմիջապես հետո կատարվում և ամիսնթթունների նոր դասավորում, կերակուր ընդունող կենդա-նու բջիջների, պլազմայի, ավշի և արյան մեջ նոր խմբավորում-ներ են կատարվում և սպիտակուցների նոր միացություններ կազմվում։ Փոփոխան այդ սուենաը չի հաջողվել վորսալ իսկ քիմիական հասարակ վերլուծումն անդոր և այդպիսի հետեւանք յերեւու։

Վորտեղ քիմիական վերլուծումն անդոր ե, այնտեղ ոգնու-թյան և գալիս բնախոսական փորձը, Պրոֆ. Արդերհալդենը մի այդպիսի պարզ, համոզիչ և հանճարեղ փորձ կատարեց։ Նա խըն-դիրս ուղղակի շուր տվեց։ Յեթե, իսկապիս, սպիտակուցների քաքայության մարսողության խողովակումն ե կատարվում, ուրեմն, կասկած չկա, վոր որպանիզմը հիանալի կերպով պիտի իր գոյու-թյունը պահպանի, յիթե նրան կերակրենք միայն զուտ ամիսն-

թթուններով։ Միթե նրա համար միևնույնը չե—սպիտակուցներն որպանիզմի մեջ են քայլային, թե՝ որպանիզմից դուրս ։ Սպի-տակուցների յուրացման տեսակետից այդ միևնույն եւ։

Պրոֆ. Արդերհալդենն ու իր աշակերտները կենդանիներին, քայլայիւմ սպիտակուցներով կերակրելու մի շարք փորձեր կա-տարեցին։ Սկզբում չների վրա և հետո նույն փորձերը կրկնե-ցին նաև մարդկանց վրա։ Այդ փորձերն սպասածից բարձր ար-դյունքներ տվին։ Շներին ամիսնթթուններով կերակրելիս վոչ միայն նրանց քաշը չպահպանեց, այս, ընդհակառակը, զգալի չա-փով ավելացավ, և նրանք իրենց զգում ելին վերապահցապես լավ։ Շան լակուններից մեկի վրա կատարված փորձից պարզվեց, վոր նրա քաշն ավելացել եր 309 գրամ։ Մեկ ուրիշ փորձի ժա-մանակ, շանը 17 որ սովոր պահելուց հետո, նրա քաշը պակա-սեց 1.700 գրամ, իսկ քսան և մեկ որ ամիսնթթուններով կերա-կրպվելուց հետո նա վոչ միայն իր կորունտը վերադարձրեց, այլև 1.400 զրամ ել իր քաշի վրա ավելացրեց։

Վերջապես վճռականը մարդու վրա կատարած փորձն եր-Պրոֆ. Արդերհալդենի ունկնդիրներից մեկը համաձայնեց 15 որ միայն կլիզմայի միջոցով սպիտակուցային կերակրամթերքներ ընդունելով մասկել, վորովհետեւ ամիսնթթուններն այնպիսի գար-շելի համ ունեն, վոր անմիջապես փսխեցնում են։ Սակայն փոր-ձի յենթարկվողն այդ տասնեւինդ որվա ընթացքում վոչ միայն չսովածացավ, այլև մինչև անդամ կազմուրվեց, և նրա քաշն ավելացավ։

Այս կարգի փորձերը մի գործնական հետևանք ել ունեցան։ Նրանք ապացուցեցին, վոր մարդու մարսողության խողովակը շատ լավ յուրացնում ե կլիզմայի միջոցով ներմուծած սպիտա-կուցները, հետեւաբար՝ յերբ մեկը կերակրափողի կամ ստամոքսի հիվանդությունը ունի, կամ նոր ոպերացիայի յե յենթարկվել, հնարավոր ե արհեստական կերպով ամիսնթթուններով կերակրել նրան։ Ներկայում թժշկականության մեջ այդպիսի սննդառու-թյուն գործարվում ե։ Գերմանական քիմիական գործարաննե-րից մեկում պատրաստում են «երիպտան» անվան տակ՝ տարրա-ռձածած միս—ըստ Արդերհալդենի։ Նույն հաջողությամբ պատ-րաստում են արյան սպիտակուցները, հավի ձվի սպիտակուցը և այլն, վորոնք շատ լավ յուրացվում են աղիքների կողմից։

Սակայն ամենակարենորն այստեղ Արդերհալդենի վերոհիշյալ փորձերից հանած տեսական յեղբակացություններն են։ Նրանք

գալիս են մեղ համոզելու, վոր սպիտակուցներն իսկապես աղիք-ների մեջ վերլուծվում են ամինոթթուների, գուցե նույնիսկ ել ամերի պարզ բաղադրիչների:

Հետագա փորձերն ապացուցեցին, վոր կենդամնու կերպարը
մեջ մտնող նյութերն ել—ճարպերը, ածխաջրերը, նուկլեո միացու-
թյունները—նույնպիս կարող են տարրալուծվել իրենց բաղադրիչ-
մասերին: Ինչպես, որինակ, ճարպերը վերլուծվում են զլցերինի-
և ճարպաթթվի, ուշան փոխվում ե խաղողաքարի, նուկլեո-
թթյունները՝ ավելի պարզ միացությունների: Իսկ յեթե այս վեր-
լուծված կերպարանյութերի հնա համեմատական չափով խառննեք
և նրանց վրա ավելացնենք համապատասխան քանակությամբ
ամիսոթթուններ, մենք կստանանք արհեստական կերպը մե-
խառնուրդ, վոր լիովին կհամապատասխանի նորմալ կերպիրին:

Սննդի այլպիսի խառնուրդով կենդանիներին կերակրելու ապացուցեց, վոր այդ խառնուրդն իր բնախոսական ներգործությամբ միանգամայն համապատասխանում և նորմալ սննդառության պահանջներին: Կենդանին ըոլորովին չի տանջվում, քաշն ավելանում ե ինչպես բնական պայմաններում կերակրելիս:

Ի միջի այլոց վաղուց արդին սինթեզի ճանապարհով ստացվել են ճարպերի պարզ բաղադրիչները՝ գլիցերինը և ճարպաթթուները, Խաղողաշաքարը, ինչպես վերևում տեսանք, ստացվում ե փորմալգեհիդրից: Ե. Ֆլշերի և Կասոնիի նշանավոր աշխատանքներից հետո ամինօթթուներն ու նուկլեո միացություններն արհեստական կերպով ձեռք են բերվում աշխատանցներում: Հետեաբար աշխատանոցի այլ արդյունքներից մենք կարող ենք ուտելիքի խառնուրդ պատրաստել: Աշխատանոցի սրվակներում և ուտորաններում պատրաստած արհեստական ուտելվող մենք կարող կարող ենք վարել կենդանու և նույնիսկ մարդու կերակրեր: Արհեստական սնուցման խնդիրը տեսականորեն կարելի յե լուծված համարել, իսկ յեթե զարծնականորեն այդ փորձը չենք կատարում, ինչպես վերևում ասացինք, պատճառը գլխավորապես այս ե, փոր այդ ճանապարհով ձեռք բերված կերակուրը շատ թանգ և նստում: Մի շուրջ կերակրելու համար հարկավոր ե մի ամբողջ գործարան հիմնել, վորպեսզի կարողանանք սինթեզի կարգով այդ կերակրի բաղադրիչ մասերը կազմել: Իսկ այդ այնպիսի հոկայական ծախսերի հետ ե կապված, վոր ստացած արդյունքներով արդարացնել անկարելի յե: Բացի թանգությունից, արհեստական կերակրումը մեկ ու-

Բայց թանգությունից, արհեստական կերպարումը մեկ ու-

Քիշ անհարմարություն ել ունի, ինչպես պըսով. Արդերհարդենն
ինքը մի մելամզիկ շեշտով նկատում ե, թե սինչի անգամ աշ-
խատանցային պայմաններին ամեն կողմից վարժեցրած շունչն ել
արենատական կերակրի գարշելի համից փախում եւ.

Նրա կարծիքով՝ այդպիսի կերակրով այսինքն աղիքների համար արգեն յուրացման պատրաստ նյութերով կերակրելը կարող է մարսողության բազմահաղար տարիների ընթացքը փոխել Մի շարք որդաններ իրենց արտաթորած հյութերով կարող են ավելորդ համարվել, և հայտնի չեն, թե որդանիզմի համար այդ Բնչ հետևանքներ կարող են ունենալ:

Այսպես ուրեմն, քանի դեռ գործնական կյանքում մենք կերակրվում ենք բուսական և կենդանական կերակրանյութերով, իսկ բուսաբըն ու կենդանիները մեզ համար ավելի տնտեսաբար և յուրացման տեսակետից ավելի նպատակահարմար կերպով են պատրաստում այդ նյութերը քան քիմիկոսները քիմիական աշխատանոցում, դեռ ևս վերջինիս կարիքը չենք զգում: Համենայն դեպք տեսնում ենք, զոր Շլյանքի քիմիան» սննդառության բնակավառում հակայական քայլեր ե արել:

Ուրեմն մեզ այժմ հայտնի յե, վոր սպիտակուցները և կե-
րակը մյուս բաղադրիչ մասերն որգանիզմի ներսում յուրացվե-
լուց առաջ, նախ մինչև հիմքը քայլաւում են, վեր են ածվում,
այսպիս ասած, աղյուսակույտերի և ապա այդ կույտից աղիքնե-
րի մեջ զերացինվում ե որգանիզմի պահանջներին համապատաս-
խան մի նոր շենք: Կերակրանյութերը վոչ թե ներծծվում են հե-
ղուկացած վիճակում, այլ մինչև հիմքը քանդվելուց և նոր պա-
հանջների համաձայն վերաբնմիելուց հետո

Մեր արյան և ավշի մեջ մտնող սպիտակուցները զոչ թե
բույսերի և կենդանական կերակուրների թեթև փոփոխության
յննթարկված սպիտակուցներն են, ալ մնը սեփական սպիտակօւց-
ները, բուրովին յուրահատուկ կառուցվ սծքով: Այստեղից կարե-
լի յե յեղակացնել: Վոր յուրաքանչյուր որգանիզմ, քիմիական
բաղադրամիջան և հորինվածքի տեսակետից, ունի իր առանձին
անհատականությունը:

Այս յեղբակացությունը, կյանքի պրոցեսները բացատրելու
ուսակեածից, անպայման լուրջ ե, և կենսաբանական բնագավառ-
ից զերցրած նորագույն ուսումնակելի տվյալներով կարելի յե այդ
հաստատել:



ինչպես տեսանք, պրոֆ. Արդերհալզենի գյուտերը բերին այն յեղակացության, վոր կենդանի որդանիզմն ոտար սպիտակուցները չի ընդունում այն հորինվածքով, ինչ հորինվածքով կոր նրանք մտնում են մարսողության խողովակը, այլ նրանց վոր նրանք մտնում են մարսողության խողովակը, այլ նրանց վայքայում են, վերաշինում, դարձնում են իր սեփական սպիտակայքայում և ապա յուրացնում: Մի խոսքով՝ այդ սպիտակուցները կուցները և ապա յուրացնում: Մի խոսքով՝ այդ սպիտակուցները գառնում են ընդունող որդանիզմի մին ու արյունը, այլևս նրանք ոտար չեն, այլ հարազատ են որդանիզմին:

Պրոֆ. Արդերհալզենն այդ յեղակացության գալուց հետո դնում են մի շատ բնական հարց. ինչ կլինի, յեթե մարսողության խողովակը մի կողմ թողնենք և ուղղակի արյան շրջանառության մեջ մտցնենք այդ ոտար սպիտակուցները: Արդյոք նրանք կերպարանափոխվեն, թե առանց փոփոխության կմտնեն արյան մեջ:

Որդանիզմի մեջ ներմուծվող ոտար նյութերի վրա արյան ազդեցությունն արդեն ուսումնասիրված է: Այդ ուսումնասիրության հիման վրա կարելի յետ ավելի շուտ յենթադրել, վոր ներմուծված սպիտակուցներն ել պիտի փոխվեն:

